

**ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ
ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Ամալյա Համբարձումյան, Գայանե Պողոսյան, 2006

Վերջին տասնամյակներում աշխարհում, ինչպես նաև մեր հանրապետությունում սրվել են գլոբալ և ազգային էկոլոգիական հիմնախնդիրները, որոնք վտանգ են ներկայացնում բնության ամբողջականության, կայունության և առաջին հերթին մարդկային հասարակության գոյության համար:

Ներկայումս Հայաստանի բնակչության նշանակալի մասը բավարար չափով իրագել չէ հանրապետության ինչպես ազգային, այնպես էլ համընդհանուր էկոլոգիական հիմնախնդիրներին: Ուստի կարևորվում է բնակչության էկոլոգիական գիտելիքների մակարդակի և իրագելության բարձրացումը, և նրա ակտիվ մասնակցությունը ազգային բնապահպանական գործընթացում: Էկոլոգիական գիտելիքները հույժ անհրաժեշտ են ոչ միայն իմացական և գործնական, տեխնոլոգիական և կենսապահովման, այլև բնապահպանական առումով: Առանց էկոլոգիական գիտելիքների իմացության անհնար է ձևավորել էկոլոգիական մտածելակերպ: Էկոլոգիական գիտելիքները մարդու և բնության ճիշտ փոխհարաբերության, առողջ ապրելակերպի հիմքն են և պայմաններ են ստեղծում էկոլոգիական կուլտուրայի ձևավորման համար: Հետևաբար, Հայաստանի համար արդիական է էկոկրթության համակարգի զարգացումը:

Էկոլոգիական կրթության համակարգի զարգացումը կնպաստի նաև բնակչության էկոլոգիական անվտանգության, որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչի ապահովումը, մարդու և բնության փոխհարաբերություններում համամոլորակային մարդասիրական արժեքների գերակայությունների ընդունմանը:

Այդ իսկ պատճառով, 2001թ. հանրապետությունում ընդունվեց «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» օրենքը: Համաձայն օրենքի էկոլոգիական կրթությունը պետք է իրականացվի մարդու ողջ կյանքի ընթացքում վաղ՝ մանկությունից սկսած մինչև հասուն տարիք, էկոլոգիական աշխարհայացքի և բնապահպանական գործընթացում անձի մասնակցության գիտակցության ձևավորմամբ: Էկոլոգիական համակարգը ներառում է ա/ նախադպրոցական էկոլոգիական կրթություն, բ/ միջնակարգ էկոլոգիական կրթություն, գ/ միջին մասնագիտական էկոլոգիական կրթություն, դ/ մասնագիտական էկոլոգիական կրթություն, ե/ հետբուհական էկոլոգիական կրթություն և զ/ հասարակության լայն խավերի էկոլոգիական կրթություն:

Այստեղ ցանկանում են բերել մի քանի տվյալներ հանրապետությունում էկոլոգիական կրթության կազմակերպման վերաբերյալ: Կրթական համակարգի նախադպրոցական օղակում «Նախադպրոցական կրթական համալիր ծրագրում» առանձին բաժին է հատկացված էկոլոգիական դաստիարակության խնդիրներին ըստ տարիքային խմբերի: Էկոլոգիական կրթության գործընթացը կազմակերպվում է առարկայական չափորոշիչների, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և մեթոդական ձեռնարկների միջոցով: Եթե հանրակրթության կրտսեր և միջին դպրոցում էկոլոգիական կրթությունը իրականացվում է ինտեգրացված դասընթացների տեսքով, ապա ավագ դպրոցում 9--րդ դասարանում համաձայն նոր Կրթակարգի նախատեսվում է որպես առանձին «Էկոլոգիա» առարկա: Բոլոր բուհերում՝ անկախ մասնագիտական ուղղվածությունից անցնում են «Էկոլոգիայի հիմունքներ» առարկան:

2003թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել է էկոլոգիական կրթության ռազմավարական ծրագիրը և ներկայումս այն իրականացման գործընթացում է: Էկոլոգիական կրթության իրականացման գործընթացում ակտիվ մասնակցություն են ցուցաբերում բնապահպանական ՈԿԿ-երը:

Այժմ ցանկանում են կանգ առնել հանրապետությունում իրականացվող «Կայուն զարգացման» և «Կրթություն հանուն կայուն զարգացման» գործընթացներին:

2002 թ. հուլիսին ՀՀ կառավարության որոշմամբ հիմնվել է «Կայուն զարգացման ազգային խորհուրդ», որը պատասխանատու է Կայուն զարգացման ազգային ռազմավարության մշակման և իրականացման համար:

2002թ. ՈԿԿ-ի և հանրապետության գիտական սեկտորի նախաձեռնությամբ մշակվել է «Կայուն զարգացման» հայեցակարգը: Նույն թվականին ՀՀ կառավարությունը պատրաստել է «Ազգային գնահատման զեկույցը», որը ներառում է այդ բնագավառում ազգային ռազմավարության հայեցակարգի հիմնական սկզբունքները և մոտեցումները: Զեկույցը ներկայացվել է 2002 թ. օգոստոսի 26-ից սեպտեմբերի 4-ը Յոհանեսբուրգում կայացած «Կայուն զարգացման գագաթաժողովում»:

1994թ.-ից սկսած ԵՊՀ և մի շարք այլ բուհերում դասավանդվում է «Կայուն զարգացում» դասընթացը:

ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովը 2005-2015թ.թ. հայտարարել է «Կրթություն հանուն կայուն զարգացման» տասնամյակ: Այդ նպատակով ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Էկոլոգիական քաղաքականության կոմիտեի նախաձեռնությամբ 2002-

2004թ.թ. մշակվեց «Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարական փաստաթուղթը, որը հաստատվեց 2005թ. մարտին Վիլնյուսում կայացած ՍԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի անդամ երկրների կրթության և բնապահպանության նախարարների բարձր մակարդակի հանդիպման ժամանակ:

Վերոնշյալ հանդիպման բարձր մակարդակի Խորհրդակցությունը որոշեց նաև Ռազմավարական ծրագրի իրականացման և այդ ուղղությամբ հաջողությունների հասնելու նպատակով ստեղծել «Կրթություն հանուն կայուն զարգացման» (ԿԿՁ) Ղեկավար կոմիտե և Փորձագետների խումբ, որ պետք է մշակի Ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետության ցուցիչները:

Փորձագետների կողմից մշակված ԿԿՁ-ի հիմնարար փաստաթուղթը այնուհետև պետք է ներկայացվի Ղեկավար կոմիտեի հանդիպմանը և արժանանա նրա հավանությանը: 2007թ.-ի հոկտեմբերին կրթության և բնապահպանության նախարարների բարձր հանդիպման ժամանակ պետք է հաստատվի վերոնշյալ փաստաթուղթը:

2005թ.-ից Հայաստանում գործում է «Կրթություն հանուն կայուն զարգացման» Ռազմավարական ծրագրի իրականացման համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված են շահագրգիռ նախարարությունների, բուհերի, գիտական ոլորտի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Ներկայումս հանրապետությունում ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցման միջոցով իրականացվում են էկոլոգիական կրթության և «Կրթության հանուն կայուն զարգացման» շրջանակներում տարբեր ծրագրեր:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Էկոլոգիական կրթության նպատակն է մարդու և բնության հանդեպ բարոյական արժեքների ձևավորումը, ինքնասահմանափակման զգացմունքի, շրջակա միջավայրի նկատմամբ անձնական պատասխանատվության, էկոհամակարգերի խախտված հավասարակշռության վերակնգնմանը գործնական մասնակցության ցուցաբերելու ունակությունների ձևավորումը:

Հատկապես մեր ժամանակներում հսկայական նշանակություն է ստանում աճող սերնդին բնության, շրջակա միջավայրի պահպանման, կայուն օգտագործման, վերարտադրման բանական նորմերով դաստիարակումը:

Ժամանակակից էկոլոգիական ճգնաժամի պատճառը՝ բնակչության ցածր կրթվածությունն է բնապահպանական հարցերի շուրջ:

Ավանդական էկոլոգիական կրթության հիմնական արդյունքը սովորողների որոշակի տեղեկացվածությունն է բնապահպանական թեմաների վերաբերյալ: Ընդ որում թեև մասնակիցները յուրացնում են բնապահպանական գիտելիքները, պատրաստ են ընկալել տեղեկատվություն էկոլոգիական աղետների մասին, սակայն, որպես կանոն, չեն ձգտում հասկանալ դրանց առաջացման պատճառները:

Էկոլոգիական կրթության հիմնական լսարանը երեխաներն ու ուսանողներըն են, մինչդեռ էկոլոգիական հիմնահարցերը կապված են առավելապես մեծահասակ բնակչության հետ, որպես հիմնական բնօգտագործողների:

Մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է իմանալ, որ պատասխանատու է շրջակա միջավայրի վիճակի համար, հենց այդ պատճառով էլ գրքույկները հրատարակված են “Մենք ու մեր Մոլորակը” խորագրով:

Երիտասարդությանը հասցեագրված գրքույկների այս շարքում մենք փորձել ենք ծանոթացնել թե մեր երկրում, թե աշխարհում բնության մեջ տեղի ունեցող երևույթներին, շրջակա միջավայրին սպառնացող վտանգներին, տեղեկատվություն կոնվենցիաների (միջազգային համաձայնագրի) մասին, Հայաստանի կողմից ստորագրած և վավերացված կոնվենցիաները, կոնվենցիաների միջև կապը, բնապահպանական հիմնախնդիրների ազդեցությունը առողջության վրա:

Դասընթացներին նախատեսվում են զրույցներ հետևյալ թեմաներով.

1. Կլիմայի փոփոխությունը – վերջին 100 տարվա ընթացքում կլիմայի տաքացումը, ջերմաստիճանի բարձրացումը պայմանավորված է մթնոլորտում այսպես կոչված, ջերմոցային գազերի կոնցենտրացիայի բարձրացումով, առաջին հերթին ածխաթթու գազի: Այդ բարձրացումը բացատրում են հիմնականում անթրոպոգեն գործունեությամբ: Այս թեմայի հրատապությունը, կլիմայական փոփոխությունները վերաբերում են ոչ միայն գիտնականներին, այլ նաև երկրի յուրաքանչյուր բնակչին:

2. Օզոնային շերտի պահպանությունը – Օզոնային շերտը կազմում է մթնոլորտի խտության ընդամենը մեկ տասը հազարերորդական մասը, սակայն նրա պաշտպանիչ նշանակությունը կենսոլորտի համար անգնահատելի է: Այն կլանում է Արեգակից դեպի երկիր եկող ուլտրամանուշակագույն վտանգավոր ճառագայթների զգալի մասը և վահանի նման պաշտպանում մարդկանց, կենդանիներին և բույսերին կործանումից: Այս հիմնախնդրի լուծումը ոչ միայն միջազգային և պետական կառավարման մարմինների խնդիր է, այլ նաև կախված է բոլորիս գրագիտությունից այս հարցում և համապատասխան գործողություններից մեր առօրյա կյանքում:

3. Անտառը և նրա նշանակությունը - Անտառը բարդ էկոհամակարգ է, այդ էկոհամակարգի թեկուզ մեկ օղակի ոչնչացումը կարող է մեծ վնաս հասցնել: Սակայն անտառի ոչնչացման դեպքում ոչնչանում է ողջ անտառաշխարհը, որը հենց մարդու բնական միջավայրն է: Եվ միամիտ է կարծել, որ կարելի է վնասել սեփական միջավայրը և կարողանալ այնտեղ նորմալ ապրել:

Հայաստանում անտառի վիճակը մասնագետները աղետալի են համարվում Անտառի պահպանության գործում կարևոր դեր կարող է ունենալ հասարակությունը: Մեզանից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում իր և իր ապագա սերնդների համար:

4. Կենսաբազմազանության պահպանությունը – Տեսակների անհայտացումը բնական է էվոլյուցիոն պրոցեսի ընթացքում: Սակայն, այսօր մարդու գործունեության հետևանքով բոլոր տեսակները և էկոհամակարգերը ենթարկվում են ավելի մեծ վտանգի, քան մարդկության քաղաքակրթության պատմության ցանկացած այլ ժամանակահատվածում: Կենսաբազմազանության մասին Կոնվենցիայի նպատակն է կենսաբազմազանության պահպանությունը, դրա կոնպոնենտների կայուն օգտագործումը:

5. Կայուն օրգանական աղտոտիչները (ԿՕԱ) – մի շարք քիմիական միացությունների երկարատև և ոչ խելամիտ օգտագործումը լուրջ վնաս հասցրեց մարդու առողջությանը, վայրի բնությանը, ինչպես նաև ողջ էկոհամակարգերին ամբողջ աշխարհում: Հայտնի է, որ ԿՕԱ-ները ներթափանցում են շրջակա միջավայր զանազան քլորօրգանական միացությունների արտադրության, ինչպես նաև բժշկական և կենցաղային թափոնների այրման և պեստիցիդների օգտագործման ժամանակ: Յուրաքանչյուր մարդու առողջությունը 25-30%-ով կախված է բնական շրջակա միջավայրի վիճակից: Առողջության վրա ԿՕԱ-ների ազդեցության մասին բնակչության իրազեկության բարձրացումը հնարավորություն կստեղծի ընդլայնել հասարակայնության մասնակցությունը ԿՕԱ-ների ոչնչացման հետագա գործընթացին:

6. Գենետիկորոն ձևափոխված (մոդիֆիկացված) օրգանիզմներ – կենսաանվտանգությունը կենսաբազմազանության պահպանության կոնվենցիայի շրջանակներում ուսումնասիրվող ասպեկտներից մեկն է: Կենսաանվտանգության կոնցեպցիան առաջացել է ժամանակակից բիոտեխնոլոգիաների պրոդուկտների օգտագործման հնարավոր հետևանքներից մարդու առողջության և բնական

միջավայրի պահպանության անհրաժեշտությունից և ընկած է Կարտախենի արձանագրության հիմքում:

Կենսաանվտանգության ապահովումը՝ համապետական միջոցառումների համակարգի մշակում է ուղղված էկոլոգիական սպառնալիքները ժամանակին հայտնաբերելու և կանխարգելելու:

7. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներ - Դրանք արգելոցներն են, արգելավայրերը, ազգային պարկերը և բնության հուշարձանները: Իսկ ինչո՞ւ դրանք հատուկ պահպանության կարիք ունեն: Մի դեպքում դա պայմանավորված է բուսական աշխարհի որևէ եզակի տեսակի պահպանության անհրաժեշտությամբ, մյուս դեպքում դրանք մի ամբողջ էկոհամակարգ են, որոնք պետք է զերծ պահել մարդու ներգործությունից, մեկ այլ դեպքում... Իսկ ավելի լավ է կարդալ «Հատուկ պահպանվող տարածքներ» գրքույկը և ավելի մանրամասն կիմանաք՝ որոնք են պահպանվող տարածքները, ինչպիսի հոգածություն է տարվում դրանց նկատմամբ և ինչու ենք պարտավոր պահպանել դրանք:

8. Վերականգնվող (այրնտրանքային) էներգիա - էկոլոգիական ճգնաժամը աշխարհում գնալով սրվում է: Երկրի ընդերքի վառելիքաէներգետիկ պաշարների՝ նավթի, գազի, ածխի և այլնի սակավությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի վտանգավոր աղտոտումը հիմք հանդիսացան վերականգնվող էներգետիկայի բուռն զարգացման համար, քանի որ խոսվում է էներգիայի ոչ ավանդական աղբյուրների մասին՝ արևը, քամին, ջուրը, կենսազանգվածը, ծովի ալիքները, երկրի խորքում եղած ջերմությունը:

9. Սևանա լճի հիմնահարզը - Աշխարհում տասնյակ հազարավոր լճեր կան, որոնցից և ոչ մեկը չունի այն առանձնահատկությունը, որ ունի Սևանը՝ Հայաստանի Հանրապետության ամենամեծ լիճը, միևնույն ժամանակ աշխարհի ամենամեծ քաղցրահամ բարձրալեռնային լճերից մեկը: 2001թ. ընդունվել է “Սևանա լճի մասին” ՀՀ օրենքը, որը նպատակաուղղված է լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման կանոնակարգմանը:

Սակայն միշտ պետք է հիշել, որ միայն օրենքներով ու որոշումներով չէ, որ կարելի է լուծել Սևանի խնդիրը. դրա համար համաժողովրդական հոգածություն է անհրաժեշտ լճի հանդեպ, և ոչ միայն լճի...

10. Հայաստանի թռչուններն ու ձկները - Հայաստանում հանդիպող շուրջ չորս տասնյակ տեսակի ձկների ապրելակերպը և բնական վերարտադրությունը բազմազան է: Արտաքին միջավայրի մարդածին փոփոխությունները, նույնիսկ ոչ

ջրային ուղորտում, ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում են ձկնատեսակների կազմի ձևավորման վրա, նպաստում որոշ տեսակների անհետացմանը, կամ էլ նոր, անցանկալի ձկնատեսակների ներմուծմանը:

Հայաստանի թռչնաշխարհը բացառիկ բազմազան է: Այստեղ հայտնի 351 թռչնատեսակներից 100-ը բնադրող է: Գիտնականների, ինչպես նաև բնապահպանների խնդիրն է մշակել և իրականացնել մի շարք գործողություններ՝ անհետացման եզրին գտնվող տեսակները և դրանց միջավայրերը պահպանելու, վերարտադրությունն ապահովելու, ինչպես նաև էկոհամակարգերը վերականգնելու նպատակով:

11. Մեզ շրջապատող միջավայրը և Օրիուսի կոնվենցիան - Առողջ շրջակա բնական միջավայրի իրավունք. դու այդ մասին առաջին անգամ ես լսում: Դե, ուրեմն, իմացիր. դա, անկասկած, բնականորեն առողջ, քո կյանքի համար անվտանգ շրջակա միջավայրի իրավունքն է: Այս իրավունքը ճանաչվում է Օրիուսի կոնվենցիայով:

12. Ջուր - Ընդունված է համարել, որ Հայաստանի բնակիչները խմում են մաքուր և համեղ ջուր: Եվ դա, իրոք, այդպես է, քանի որ խմելու ջրի 90%-ից ավելին ստորգետնյա աղբյուրների ջրեր են: Միայն թե ջուրը չպետք է աղտոտել: Աղտոտում ենք, ջրի որակը փչացնում, վնասը կրում, հետո սկսում ենք մտածել միջոց ու ժամանակ ծախսել մաքրելու համար: Ավելի լավ չէ՞ միասին, ազգովի մտածենք՝ ինչո՞ւ է այդպես...

Ճանաչելով բնությունը, հասկանալով, որ մենք այդ միջավայրի մի մասնիկն ենք, պիտի կարողանանք փոխել մեր մտածելակերպը, մեր գործելակերպը. պատերազմել ոչ թե բնության դեմ, այլ հանուն բնության: Ամեն մեկս մեր ուժերի, բնության հանդեպ ունեցած մեր սիրո չափով: Բնությունն անխաթար ու անաղարտ պահելու, առողջ կյանքի պայմաններ ստեղծելու համար:

